

Ընդհանուր նկարագիրը	Օբյեկտիվորեն ստուգվող ցուցիչներ	Ստուգման միջոցները	Կարևոր ենթադրություն
<p>Գլխավոր նպատակը Հայաստանի Հանրապետությունում սողանքային աղետի ռիսկին առնչվող ուսումնասիրության և գնահատման արդյունքների հիման վրա սողանքային աղետի համապարփակ կառավարման պլանի մշակում, համապատասխան միջոցառումների իրականացում, սողանքներից հասցվող վնասների կրճատում:</p>	<ol style="list-style-type: none"> 1. Սողանքային աղետի համապարփակ կառավարման պլանի հիման վրա Կառավարության կողմից կհաստատվի միջնաժամկետ միջոցառումների իրականացման պլան, 2. Միջնաժամկետ պլանի հիման վրա ամեն տարի կիրականացվեն հակասողանքային միջոցառումներ: 	<ol style="list-style-type: none"> 1. Միջնաժամկետ միջոցառումների իրականացման պլանի հաստատում, 2. Հակասողանքային միջոցառումների իրականացում: 	
<p>Ծրագրի նպատակը Սողանքային աղետի կառավարման միջգերատեսչական աշխատանքային խմբի սողանքային աղետին առնչվող միջոցառումների կառավարման կարողությունների բարձրացում:</p>	<p>ԱՄՆ-ն ունակ է.</p> <ol style="list-style-type: none"> 1. Իրականացնել սողանքի կառավարման պրոցես, ներառյալ ուսումնասիրությունը, գնահատումը, միջոցառումների նախագծման (պատվիրման) վերահսկումը, (գիտելիք), 2. պատրաստել սողանքային աղետի ռիսկի նվազեցման համար անհրաժեշտ հմտությունների ստանդարտացման ուղեցույցներ և ձեռնարկներ (հմտություններ), 3. ներկայացնել առաջարկություններ կազմակերպչական կառուցվածքի և իրավական դաշտի բարելավման համար (կազմակերպում և համակարգում), 4. կատարել սողանքային աղետի մեղմացման միջոցառումների իրականացման նախապատրաստական աշխատանքներ և կառավարել միջոցառումների իրականացումը (միջոցառումների իրականացում): 	<ol style="list-style-type: none"> 1. ԱՄՆ-ի գործունեության գրանցում (նիստերի արձանագրություն, պատրաստվող նյութեր և այլն), 2. Արտակարգ իրավիճակների նախարարի կողմից հաստատված ուղեցույցներ և ձեռնարկներ, 3. Արտակարգ իրավիճակների նախարարին ներկայացված առաջարկություններ, 4. Արտակարգ իրավիճակների նախարարի կողմից հաստատված սողանքային աղետի համապարփակ կառավարման պլանը, պիլոտային ծրագրի նախագիծն ու պատվերը, իրական ժամանակում աղետի մոնիտորինգի համակարգը և միջոցառումները: 	<ul style="list-style-type: none"> • Հայաստանում սողանքային աղետի կառավարման քաղաքականությունը չի փոխվում, իսկ ԱՄՆ-ն շարունակում է գործել

Ծրագրի Նախագծային Մատրիցա (ՄՄՄ1)

Ընդհանուր նկարագիրը	Օբյեկտիվորեն ստուգվող ցուցիչներ	Մտուգման միջոցները	Կարևոր ենթադրություն
<p>Արդյունքները</p> <p>1. ԱԽ-ն ձեռք կբերի սողանքային աղետի կառավարմանն առնչվող մի շարք վարչական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ուսումնասիրության, գնահատման (կայունության վերլուծության), նախագծման, պատվիրման և իրականացման կառավարման հմտություններ ու կարողություններ:</p>	<p>1-1. Կթարմացվի նախկինում տեղի ունեցած սողանքների բաշխման քարտեզը, սողանքների գրանցամատյանը և միջոցառումների առաջնահերթությունը,</p> <p>1-2. Սողանքային աղետի կառավարման ԱԽ-ն սողանքային աղետի ռիսկի մեղմացման նպատակով արտակարգ իրավիճակների նախարարին կներկայացնի առաջարկություն:</p>	<p>1-1. Թարմացված սողանքների բաշխման քարտեզը, սողանքների գրանցամատյանը և միջոցառումների առաջնահերթությունը,</p> <p>1-2. ԱԽ-ի կողմից արտակարգ իրավիճակների նախարարին հանձնվող առաջարկությունը:</p>	<ul style="list-style-type: none"> • ԱԽ անդամները կշարունակեն աշխատել իրենց մարմիններում:
<p>2. Կմշակվի Հայաստանում սողանքային աղետի համապարփակ կառավարման պլան, ինչպես նաև կկարգավորվեն սողանքային աղետի կառավարման իրականացման ուղեցույցին (ուսումնասիրություն, գնահատում, նախագծում, պատվիրում, իրականացման կառավարում) և միջոցառումների իրականացմանն առնչվող օրենքներն ու այլ իրավական ակտերը:</p>	<p>2-1. Կձևակերպվի Հայաստանում սողանքային աղետի համապարփակ կառավարման պլան, որը կներառի մոնիտորինգ, նախնական միջոցառումներ, արտակարգ միջոցառումներ, երկարաժամկետ միջոցառումներ,</p> <p>2-2. ԱԽ-ն կպատրաստի սողանքային աղետի կառավարման ուղեցույց,</p> <p>2-3. Առնչվող գերատեսչություններում ուղեցույցի գործաձման նպատակով 4 և ավելի անգամ կկազմակերպվեն բացատրական հանդիպումներ և իրականացման վարժանքներ,</p> <p>2-4. Կպատրաստվեն հակասողանքային միջոցառումների իրականացմանն առնչվող օրենքների և նախարարության որոշումների նախագծեր:</p>	<p>2-1. Հայաստանում սողանքային աղետի համապարփակ կառավարման պլանը,</p> <p>2-2. Հաստատված բոլոր ուղեցույցները,</p> <p>2-3. ՀՀ ԱԽՆ նյութերը</p> <p>2-4. Արտակարգ իրավիճակների նախարարին հանձնվող օրենքների և նախարարության որոշումների նախագծերը:</p>	

<p>3. Համաձայն Հայաստանի Հանրապետությունում սողանքային աղետի կառավարման հայեցակարգի վերահսկում իրականացնող գերատեսչություններում և պատասխանատու գերատեսչություններում կկարգավորվի սողանքային աղետին առնչվող մոնիտորինգի, նախնական միջոցառումների, արտակարգ միջոցառումների, երկարաժամկետ միջոցառումների իրականացման համակարգը:</p>	<p>3-1. Որպես պիլոտային ծրագիր կիրականացվի թիրախային սողանքի լանջի մոնիտորինգի և ջրահեռացման հորատման միջոցառումների աշխատանքների գնահատում, կձևակերպվի միջոցառումների պլան,</p> <p>3-2. Աղետների իրական ժամանակում մոնիտորինգի համակարգում կավելացվի սողանքներին առնչվող ենթակետ,</p> <p>3-3. ՀՀ ԱԻՆ ՓԾ փրկարարական ջոկատը ձեռք կբերի հմտություններ տրամադրված դրենաժային հորատման սարքավորումներով աշխատելու համար, ինչպես նաև տեղանքում կիրականացնի 2 և ավելի հորատման և պահպանման աշխատանքներ,</p> <p>3-4. Ենթարկվելով ուղեցույցին և ստանալով ԱԻՆ-ի ցուցումներն ու խորհուրդները՝ միջոցառման իրականացման համար պատասխանատու գերատեսչությունները կպատրաստեն հակասողանքային միջոցառումների նախագիծ և պատվեր:</p>	<p>3-1. Պիլոտային ծրագրի միջոցառումների գնահատում և նախագիծ,</p> <p>3-2. Աղետի իրական ժամանակում մոնիտորինգի համակարգ (տեղական համայնքների հետ համագործակցող ՀՀ ԱԻՆ-ի հսկման համակարգը և իրական ժամանակի համակարգը ՃԿԿ-ից),</p> <p>3-3. ՀՀ ԱԻՆ-ի աշխատանքների իրականացման գրառումը,</p> <p>3-4. Ցուրաքանչյուր գերատեսչության նյութերը:</p>	<ul style="list-style-type: none"> • ԱԻՆ ճգնաժամի կառավարման կենտրոնը շարունակում է գործել և պահպանել իրական ժամանակում մոնիտորինգի համակարգը, • Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի սողանքների ուսումնասիրությանը և միջոցառումներին հատկացված մասը չի նվազի ներկայիս չափերից:
---	---	--	---

Ծրագրի Նախագծային Մատրիցա (ՄՆՄ1)

Ընդհանուր նկարագիրը	Ներդրումները	Վարկուր ենթադրություններ (նախապայմաններ)	Կարևոր ենթադրություններ (նախապայմաններ)
<p>(1-1) Կթարմացվի առկասողանքների բաշխման քարտեզը, սողանքների գրանցամատյանը և միջոցառումների առաջնահերթությունը:</p> <p>(1-1-1) 2006թ. -ից ի վեր նոր հայտնաբերված սողանքները կավելացվեն բաշխման քարտեզի վրա և կպատրաստվի գրանցամատյան (ենթադրվում է մի քանի վայր,</p> <p>(1-1-2) Սողանքների հին գրանցամատյանում նշված կետերը կթարմացվեն,</p> <p>(1-1-3) Գրանցամատյանում նշված սողանքների ակտիվության և վնասի հիման վրա կթարմացվի միջոցառումների առաջնահերթության կարգը:</p> <p>(1-2) ԱԽ-ի կողմից սողանքային աղետի կառավարման աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ ուսումնասիրությանը, գնահատմանը (կայունության վերլուծությանը), նախագծմանը, պատվիրմանը և իրականացման կառավարմանն առնչվող ստորև բերված հմտությունների և կարողությունների ձեռքբերման համար կկազմակերպվեն սեմինարներ, համատեղ աշխատանքներ և գործնական պարապմունքներ.</p> <ul style="list-style-type: none"> • Ուսումնասիրության հմտության և արդյունքների մշակման մեթոդների ուսանում, • Կայունության վերլուծության հմտության ուսանում, • Միջոցառումների նախագծման հմտության ուսանում, • Տեղեկատվական միջոցառումների նախապատրաստում և իրականացմանն առնչվող հարցերի կարգավորում, • Միջոցառումների պատվիրման ընթացակարգի նախապատրաստմանն ու իրականացմանն առնչվող հարցերի կարգավորում, • Իրականացման կառավարման ընթացակարգի նախապատրաստմանն ու իրականացմանն առնչվող հարցերի կարգավորում: <p>(1-3) Վերոնշյալ հարցերը հաղթահարելու համար կձևակերպվեն միջոցառումներ, դրանց իրականացման համար անհրաժեշտ հարցերը կամփոփվեն առաջարկության տեսքով և</p>	<p>Հայկական կողմ</p> <ul style="list-style-type: none"> ● Բյուջեի հատկացում <ol style="list-style-type: none"> 1) Հայաստանի ներսում համատեղ աշխատանքների իրականացման դեպքում համակատարող կազմակերպության աշխատակիցների աշխատավարձ և այլ վճարներ, 2) Միջոցառումների նախագծմանն առնչվող ծախսեր, 3) Ծրագրի շրջանակներում գրասենյակի շահագործման հետ կապված հաղորդակցության, էլեկտրականության, ջրի և այլ կոմունալ վճարներ, 4) Ճապոնական կողմի տրամադրած սարքավորումների մաքսազերծման, պահպանման, ինչպես նաև երկրի ներսում դրանց տեխափոխման համար տարբեր ծախսեր, 5) Ճապոնական կողմի տրամադրած սարքավորումների շահագործման և պահպանման ծախսեր: <ul style="list-style-type: none"> ● Անձնակազմի տրամադրում <ol style="list-style-type: none"> 1) Ծրագիրն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ քանակությամբ կարողություն ունեցող 	<p>Ճապոնական կողմ</p> <ul style="list-style-type: none"> ● Փորձագետներ <ol style="list-style-type: none"> 1) Գլխավոր խորհրդական/հակասողանքային միջոցառում, 2) Սողանքների ուսումնասիրություն, վերլուծություն, մոնիտորինգ, 3) Լանջի կայունացում, ջրահեռացում 4) Մոնիտորինգային ցանց 5) Օրենսդրական դաշտի կարգավորում: <ul style="list-style-type: none"> ● Սարքավորում <ul style="list-style-type: none"> • հորիզոնական հորատման մեքենա իր պարագաներով – 1 կոմպլեկտ, • Սողանքի մոնիտորինգի սարքավորումներ, ինչպիսիք են ջրի մակարդակի թվային չափիչը, էքստենզոմետրը, անձրևաչափը – 4 կոմպլեկտ, • ինտերնետային հեռահաղորդակցության սարքեր – 2 կոմպլեկտ, • սողանքի կայունության վերլուծության ծրագրային փաթեթ – 5 կոմպլեկտ ● Վերապատրաստում Ճապոնիայում ● Ծախսեր (հետազոտական հորատում, 	<p>ԱԽ-ի անդամներն ընտրված են:</p>

<p>կհանձնվեն արտակարգ իրավիճակների նախարարին:</p> <p>(2-1) ԱԽ-ն կձևակերպի Հայաստանում սողանքային աղետի համապարփակ կառավարման պլան, որը կներառի մոնիտորինգ, նախնական միջոցառումներ, արտակարգ միջոցառումներ և երկարաժամկետ միջոցառումներ:</p> <p>(2-2) ԱԽ-ն սողանքային աղետի կառավարման համար կպատրաստի հետևյալ ուղեցույցները.</p> <ul style="list-style-type: none"> • Ուսումնասիրության հմտություն և արդյունքների մշակում, • Կայունության վերլուծության հմտություն, • Միջոցառումների նախագծման հմտություն, • Տեղեկատվական միջոցառում, • Միջոցառումների պատվիրման ընթացակարգ, • Իրականացման կառավարման ընթացակարգ: <p>(2-3) Առնչվող գերատեսչություններում ուղեցույցի գործածման խթանման համար ԱԽ-ի վերոնշյալ հարցերով պատասխանատու անձի գլխավորությամբ կկազմակերպվեն բացատրական հանդիպումներ, դասընթացներ և իրականացման վարժանքներ:</p> <p>(2-4) Աջակցություն կցուցաբերվի միջոցառումների իրականացմանն առնչվող օրենքների և նախարարության որոշումների կարգավորմանը.</p> <p>(2-4-1) Գիրականացվի աղետների կառավարմանն առնչվող օրենքների և որոշումների կարգավորում ու վերանայում, սողանքային աղետին առնչվող միջոցառումների իրականացման համար կառանձնացվեն լրացուցիչ կամ փոփոխման ենթակա օրենքներ և նախարարության որոշումներ,</p> <p>(2-4-2) Լրացուցիչ կամ փոփոխման ենթակա օրենքների և նախարարության որոշումների առնչությամբ պատասխանատու գերատեսչությունների հետ կկազմակերպվեն քննարկումներ՝ կարգավորման անհրաժեշտության վերաբերյալ համաձայնություն ձեռք բերելու նպատակով,</p> <p>(2-4-3) Պատասխանատու գերատեսչությունների կողմից իրականացվող օրենքների և նախարարության որոշումների կարգավորման հարցում ԱԽ-ն կցուցաբերի</p>	<p>անձնակազմի տրամադրում:</p> <ul style="list-style-type: none"> ● Հարմարություններ <p>1) Արտակարգ իրավիճակների նախարարության ներսում օդորակիչով, հեռախոսագծով, ինտերնետով, սեղաններով և աթոռներով հագեցած գրասենյակային տարածքի տրամադրում:</p> <ul style="list-style-type: none"> ● Անհրաժեշտ կետեր <p>1) Հասանելիություն սողանքների տվյալների բազային, քարտեզներին և Ծրագրին առնչվող այլ տեղեկատվության,</p> <p>2) Հորատանցքերի բացման և մոնիտորինգի սարքավորումների տեղակայման համար անհրաժեշտ տարածքի ապահովում,</p> <p>3) Հորատման և մոնիտորինգի համար անհրաժեշտ նյութերի և սարքավորումների պահպանում,</p> <p>4) Իրական ժամանակում մոնիտորինգի իրականացման համար տվյալների շարունակական հաղորդման համար անհրաժեշտ սարքավորումների պահպանում:</p>	<p>փորձեր տեղում և գրունտի թեստեր)</p>	
--	--	--	--

<p>տեխնիկական աջակցություն, նախագծային տարբերակի մշակման աջակցություն և այլն:</p> <p>(3-1) Հակասողանքային միջոցառումների մոնիտորինգի և ջրահեռացման հորատման աշխատանքների գնահատում, նախագծում և նախապատրաստում:</p> <p>(3-2) Աղետի իրական ժամանակում մոնիտորինգի համակարգին (բնակիչների կազմակերպությունների հետ համագործակցող ՀՀ ԱԻՆ-ի հսկման համակարգ և իրական ժամանակի համակարգ ՃԿԿ-ից, յուրաքանչյուրը 2 համակարգ) կավելացվի սողանքին առնչվող ենթակետ,</p> <p>(3-2-1) Մոնիտորինգի նպատակներն ու հարցերը պարզելուց հետո կձևակերպվի սողանքի մոնիտորինգի համակարգի ներդրմանն առնչվող նախագիծ, որը կներառի մոնիտորինգի սարքավորումների տեղակայման նախագիծ:</p> <p>(3-2-2) Կտրամադրվեն մոնիտորինգի համար անհրաժեշտ սարքավորումներ:</p> <p>(3-2-3) Կպատրաստվի մոնիտորինգի ձեռնարկ, կիրականացվի վարժանք:</p> <p>(3-3) ՀՀ ԱԻՆ ՓԾ փրկարարական ջոկատը ձեռք կբերի հմտություններ տրամադրված դրենաժային հորատման սարքավորումներով աշխատելու համար, ինչպես նաև կիրականացնի հորատման և պահպանման աշխատանքներ:</p> <p>(3-3-1) Կտրամադրվեն դրենաժային հորատման նյութեր և սարքավորումներ,</p> <p>(3-3-2) Հորատման ձեռնարկի հիման վրա կկազմակերպվեն շահագործման վարժանքներ,</p> <p>(3-3-3) Դրենաժային հորատման սողանքային տարածքի որոշման հետ մեկտեղ կպատրաստվի հորատման իրականացման պլան, որը կներառի տեղեկություն հորատման վայրի, հորատման խորության և այլնի մասին,</p> <p>(3-3-4) Դրենաժային հորատում իրականացնելուց և հորատանցքը բացելուց հետո անհրաժեշտության դեպքում կկառուցվի դրենաժ,</p> <p>(3-3-5) Հորատանցքի պահպանման հետ մեկտեղ անհրաժեշտության դեպքում կիրականացվի</p>			
---	--	--	--

<p>մոնիտորինգ (ջրի քանակի և որակի ստուգում):</p> <p>(3-4) Ենթարկվելով ուղեցույցին և ստանալով ցուցում ու խորհուրդներ ԱԽ-ի կողմից, միջոցառումների իրականացման պատասխանատու գերատեսչությունը կպատրաստի հակասողանքային միջոցառումների նախագծային և պատվիրման փաստաթղթերը:</p> <p>(3-4-1) ԱԽ-ն կպատրաստի կայունության հաշվարկի արդյունքները և միջոցառումների ընդհանուր նկարագիրը,</p> <p>(3-4-2) Միջոցառումների իրականացման պատասխանատու գերատեսչությունը հիմք ընդունելով ձեռնարկը և ստանալով աջակցություն ու խորհուրդներ ԱԽ-ի կողմից, կպատվիրի միջոցառումների նախագծում և կիրականացնի պայմանագրերի ձևակերպման կառավարում,</p> <p>(3-4-3) Միջոցառումների իրականացման պատասխանատու գերատեսչությունը հիմք ընդունելով ձեռնարկը և ստանալով աջակցություն ու խորհուրդներ ԱԽ-ի կողմից, կիրականացնի պատրաստված նախագծի ստուգում և կնախապատրաստի շինարարական աշխատանքների տեխնիկական բնութագիրը և պայմանագրերի նախագծային տարբերակը:</p>			
--	--	--	--

ԱԽՆ: Արտակարգ իրավիճակների նախարարություն

Գործողությունների նախնական պլան

Մրագրի անվանումը - Սողանքային աղետի կառավարման ծրագիր

Տարբերակ 1

Մրագրի տևողությունը - 3 տարի

Ամսաթիվ՝ 12.08.2014թ.

	1-ին տարի				2-րդ տարի				3-րդ տարի			
	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV
(1) ԱՆ-ն ձեռք կրերի սողանքային աղետի կառավարմանն առնչվող մի շարք վարչական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ հմտություններ ու կարողություններ, ինչպես նաև կներկայացնի առաջարկություն սողանքային աղետի ռիսկի նվազեցման համար:												
(1-1) Կթարմացվեն առկա սողանքների բաշխման քարտեզը, սողանքների գրանցամատյանը և միջոցառումների առաջնահերթությունը:												
(1-2) ԱՆ-ի կողմից սողանքային աղետի կառավարման աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ ուսումնասիրությանը, գնահատմանը (կայունության վերլուծությանը), նախագծմանը, պատվիրմանը և իրականացման կառավարմանն առնչվող հմտությունների և կարողությունների ձեռքբերման համար կկազմակերպվեն սեմինարներ, համատեղ աշխատանքներ և գործնական պարապմունքներ:												
(1-3) Ծագած խնդիրները լուծելու համար պլանների մշակում և առաջարկությունների ներկայացում ԱԻ նախարարին լուծման համար:												
(2) Հայաստանի Հանրապետությունում սողանքային աղետի համապարփակ կառավարման պլանի մշակում, սողանքային աղետի կառավարման իրականացման ուղեցույցի (ուսումնասիրություն, գնահատում, նախագծում, պատվիրում, իրականացման կառավարում) պատրաստում և աջակցություն միջոցառումների իրականացմանն առնչվող օրենքների ու այլ իրավական ակտերի կատարելագործման հարցում:												
(2-1) ԱՆ-ն կմշակի սողանքային աղետի համապարփակ կառավարման պլան, որը կներառի մոնիտորինգ, նախնական միջոցառումներ, արտակարգ միջոցառումներ և երկարաժամկետ միջոցառումներ:												
(2-2) ԱՆ-ն կպատրաստի սողանքային աղետի կառավարման ուղեցույցներ:												
(2-3) Առնչվող գերատեսչություններում ուղեցույցի գործածման խթանման համար ԱՆ-ի վերոնշյալ հարցերով պատասխանատու անձի գլխավորությամբ կկազմակերպվեն բացատրական հանդիպումներ, դասընթացներ և իրականացման վարժանքներ:												
(2-4) Աջակցություն կցուցաբերվի միջոցառումների իրականացմանն առնչվող օրենքների և այլ իրավական ակտերի կատարելագործմանը:												
(3) Համաձայն Հայաստանի Հանրապետությունում սողանքային աղետի կառավարման հայեցակարգին (ռազմավարությանը), վերահսկում իրականացնող գերատեսչություններում և պատասխանատու գերատեսչություններում կկարգավորվի սողանքային աղետին առնչվող մոնիտորինգի, նախնական միջոցառումների, արտակարգ միջոցառումների, երկարաժամկետ միջոցառումների իրականացման համակարգը:												
(3-1) Հակասողանքային միջոցառումների մոնիտորինգի և ջրահեռացման հորատման աշխատանքների գնահատում, նախագծում և նախապատրաստում												
(3-2) ԱԲՆ ՃԿԿ-ում սողանքի մոնիտորինգի համակարգի ներդրում, որը կղեկավարվի ԱԲՆ-ի կողմից՝ համագործակցելով տեղական համայնքների հետ:												
(3-3) ՀՀ ԱԲՆ ձեռք կրերի հմտություններ տրամադրված դրենաժային հորատման սարքավորումներով աշխատելու համար, ինչպես նաև կիրականացնի հորատման և պահպանման աշխատանքներ:												
(3-4) ԱՆ աջակցությամբ և խորհրդատվությամբ միջոցառումների իրականացման պատասխանատու գերատեսչությունների կողմից հակասողանքային միջոցառումների նախագծային և մրցութային փաստաթղթերի պատրաստում:												

→
ՃՄՉԳ հաստատում, տեղական համաձայնության ձևավորում, իրականացման համակարգի կարգավորում, սարքավորումների